

թուղթի (այդ օրերուն համիտիէ կը կոչուէր այդ թղթիկը) կառավարութիւնը մեռել չ'ընդունիր, ինչ որ կը նշանակէ՝ ապրիլ չ'ընդունիր, որպէսզի չուողին հաշիւը, Էսամէն փակէ իր տոմարներուն մէջ: Քանի՛-Քանի՛ անգամներ հարկ է տեսնուած թուղթ մարել, որ կը նշանակէ պզտիկի մը թուղթը յարմարցնել մեծի մը: Կառավարութիւնը կը պահանջէ, որ մեռնողին անձնական թուղթին կցուի վկայագիր մըն ալ, մուխթարէն, աղաներէն ստորագրուած, ու կնիքներով փակեցուած, ուր ճշդուած ըլլար հիւանդութեան մերձաւոր տեսակն ալ (բարեբախտաբար այդ տեսակ հիւանդութիւններ հասկնալու, անուանելու համար անհրաժեշտ չէ բժշկական վկայականը, քանի որ մահը վեց-եօթը հազար կերպարանքներու տակ կը ներկայանայ գեղերը: Ծնունդէն մինչեւ հինգ տարեկան, տղաքը կը մեռնին փորքշուքով: Մինչեւ քսան ու քիչ մը վեր՝ հիւծախտով, թիֆոյով, եւայլն: Յիսունէն ետք՝ սիրտով ու կաթուածով) ու զրկել պատրաստուած օրինական թուղթերը գաւառակին կեդրոնը, գազա: Ամէն օր մարդ կը ծնի: Մկրտելը եթէ քահանային գործն է, զայն արձանագրելն ալ ժամու մեծ տոմարին, ինչպէս կառավարութեան տեսրակներուն մէջ՝ պարտքն է վարժապետին: Ամէն օր մարդ կ'ուզէ մեծնալ (տարիքէն) կամ պզտիկնալ, կարգուելու, ժառանգելու, չափի հասնելու կամ անկէ վեր մնալու հաշիւներով: Վարժապետը բաւական խելացի չուն մը պէտք է ըլլայ, այս հաշիւները տակէն հասկնալու, բայց դուրսին չզարնելու: Ժողովի մը վկայութիւնը զայն կ'արտօնէ թուանշաններու հետ խաղալ այնպէս՝ ինչպէս կ'ուզէ խնդրարկուն: Այդ ճարտարութեամբ տասնութը չմտած պատանին կը դառնայ քսանմէկը անցնող, հետեւաբար՝ ինքնիշխան քաղաքացի, օսմանեան հպատակ ու կը ժառանգէ: Դարձեալ այդ ճարտարութեամբ կռիւի ընթացքին իր ընկերը ծանրօրէն, երբեմն մահացու կերպով վիրաւորած երիտասարդը կը պզտիկնայ, օրէնքին սահմանները հասնելու համար, ուրկէ վար պատժա-